


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ
 ~~~~~  
 Պուրկարիոյ համար  
 Տարեկան ֆրք. 10  
 Վեցամսեայ " 5  
 Արտասահման  
 Տարեկան ֆրք. 12  
 Վեցամսեայ " 6  
 ԿԱՆՆԻԿ  
 ~~~~~



Գրութիւնք ետ չեն
 արուիր:
 ~~~~~  
 Հասցե  
 DIRAN PAPAZIAN  
 RUE DRAGOMAN  
 K. STEPAN  
 (BULGARIE) VARNA

**ՇԱՐԱԹԱՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ**

Երես կ'ուզեմ "Հայեղի"ին մէջ աղոտ երեւնալ,  
 Պարսիք սիրուն եւ ազնիւ դեմք մը ունենալ:

**ԱԶԳԱՅԻՆ**  
 (ԱՅՍՍՕՐՈՒԱՆ ԹՂԹԱՔԵՐ)

Կիպրոսի Որբանոցի Վարչութիւնը  
 10 ուշիմ որբերուցած է Պատրիարքա-  
 րանէն, նոյն որբանոցին մէջ դաստիա-  
 րակուելու համար: Սոյն որբանոցը մէկ  
 քանի յաջոյ շրջանաւարտներ ունեցած  
 է, որոնցմէ մէկը արդէն ուսուցչութեամբ  
 կը պարապի. ուրիշ մըն ալ Բարիզի Գե-  
 ղարուեստից վարժարանը կը յաճախէ  
 Բարիզարնակ ուսանողներու պաշտպա-  
 նութեամբ: Կըսուի թէ Սոյն վիճակէն  
 պիտի զրկուին ուզուած 10 որբերը:

— Ամասիոյ առաջն տեղապահ Վան-  
 քեան վարդապետ՝ Մարտուանի վանքին  
 պատկանող Աղբլեքի կոչուած ընդար-  
 ձակ արտը որ Օսման պէյ անուն անձի  
 մը կողմէ գրաւուած է եղեր, այս ան-  
 զամ յաջողեր է վանքին վերադարձնել:

— Ուսուցչութեան ընտրելիներու կի-  
 րակնօրեայ դասաւանդութեանց մէջ Ս.  
 Պատրիարքը պիտի ստանձնէ կրօնքի և  
 բարոյականի դասը, սօքթ. Թորգոմ-  
 եան, Պէրպէրեան, Գուրգէն ու Սուրէն-  
 եան ալ իրենց մասնադիտութեան վե-  
 րաբերող ճիւղ մը պիտի ստանձնեն անձ-  
 նուէրաբար:

— Ատանայի մէջ հանգուցեալ Միրի-  
 ճեան Կիրակոսի կողմէ տեղւոյն երկու  
 եկեղեցիներուն կտակուած ալիւրի գոր-  
 ծարանի մը մէկ բաժինը Պատրիարքա-  
 րանի գիտութեամբ ծախուեր ու անոր  
 տեղը երեք հասութարեր կալուածներ  
 դնուեր են:

— Հռովմէական ազգայիններէն շու-  
 սանկարիչ Վէնսան Ապտուլլահ և իր որ-  
 ղին ներսէն անցեալ շաբթու իսլամա-  
 ցեր են. հօրը անունը Ապտուլլահ Ծիւ-  
 քրի ու տղունն ալ Ապտուլլահ Զիեա  
 գրուեր է:

— Փետրվարի վերջերը Բարիզի մէջ  
 պիտի սկսի հրատարակուիլ Զարդ անու-  
 նով հայերէն նորաձևութեան հանդէս  
 մը, տիկին Մարի Սըվաճեանի կողմէ:

— Թիֆլիզէն Յունուար 28 թուակա-  
 նաւ կը գրեն թէ, հոն նորէն երկրա-  
 շարժի ցնցումներ զգացուելով երեք գիւ-  
 ղեր մեծապէս փնատուեր, շատ սուներ  
 փլեր ու բազմաթիւ մարդիկ փլատակ-  
 ներուն տակ մնացեր են: Ժողովուրդը  
 սարսափահար բացօդեայ տեղեր կը բը-  
 նակի, հակառակ ձմրան սառուկութեանը:

— Նիւ-Եօրքէ գրուած նամակէ մը  
 կը տեղեկանանք թէ Ամերիկայի Փրէզ-

նօ քաղաքին մէջ կը գտնուին 5—600 հայեր, որոնք մեծ մասամբ չամիչի և թուփի գործերով կը զբաղին ու բաւական բարեկեցիկ վիճակ մը ունին :



Յաւելով կը ծանուցանենք թէ տեղւոյս առաջնակարգ Հայ վաճառականներէն բնիկ Զմբուհիացի Տիար Պողոս Փափազեան՝ չի կրնալով ատենէ մը ի վեր զինքը նեղող սրտի հիւանդութենէն ազատիլ, ևրեկ առտու առ Աստուած փոխեցաւ անմխիթար սուգի մէջ թողլով իր վշտահար այրին և հինգ զաւկները :

Յուզարկաւորութեան հանդէսը կը կատարուի այսօր ժամը 2ին, տեղւոյս Ս Սարգիս եկեղեցիին մէջ, ուր փոխադրեալ է արդէն հանգուցելոյն մարմինը և պիտի ամփոփուի աղգային՝ գերեզմանատունը :

Կը լսենք թէ սգակիր այրին և բարեկամք յայտարարած են որ հանգուցելոյն զաւգաղին ծաղկեփունջ նուիրել ու զոյնները՝ այդ նպատակաւ արուելիք գըրամը յատկացնեն զալթական աղքատ աղգայնոց ճանապարհածախսին :



Յունուար 23ին թաթար Բազար-ճըքի մէջ թաղ. Խորհրդոյ ընտրութիւն կատարուելով, քուէից մեծամասնութեամբ թաղ. Խորհրդոյ անդամ ընտրուած են .

Տւարք

- Թագւոր մհի . Ներսէսեան
- Խաչիկ . Մանավեան
- Կարապետ մհի . Յարութիւնեան
- Ներսէս Տ . Մէլիքեան
- Յակօր . Փափազեան

(Պաշտօնական)

Խորհուրդս նկատելով որ հարսանիքի, թաղման, մկրտութեան և այլ ամեն աղգային թաղականութեան վերաբերեալ գործողութեանց ապառիկի դրութիւնը աղգային գործոց կանոնաւորընթացքին արգելք կը ըլլայ, որոշեց որ ասկէ վերջը Խորհրդոյս հետ ըլլալիք գործառնութիւնք առանց բացառութեան կանխիկ վճարմամբ ըլլան :

Ի դիմաց Թաղ. Խորհրդոյ  
 Ատենադպիր Ատենագետ  
 Ս. Դարբիշեան Յ. Մ. Քոյվասեան

Զ Ա Ն Ա Չ Ա Ն Ք

1900Ի

Արուեստահանդէսին մէկ նորութիւնը

Այս տարուան Բարիկի արուեստահանդէսին էն սիրուն և էն հմայիչ նորութիւններէն մէկը պիտի ըլլայ վերակենդանացուած ԺԴ. — ԺԸ. դարերու Բարիկին, իր շէնքերով, փողոցներով, տարազներով ու կեանքով :

Այցելուները, Հան տը Մարսի ո՛ր կողմն ալ ըլլան, իրենց աչքին առջև պարզուած պիտի տեսնեն նախնի Բարիզը, կառուցուած Սէնի աջ եզերքին վրայ, Թիւյերլըի պարտէզէն սկսեալ մինչև Հան տը Մարսի միւս ծայրը: Այդ ընդարձակ տարածութեան վըրայ գրեթէ ութը ամսուան մէջ վերակենդանացեալ պիտի ըլլայ հին ատեններու Բարիզ քաղաքը, բաւական մեծ, իր գուռներով, փողոցներով, հրապարակներով, եկեղեցիներով, տօնավաճառով, թատրոններով, նուաբարբրահներով, արդիսդի սրճարաններով, ժողովրդական կապելաներով, կառքերով, տուներով ու խանութներով, որոնց մէջ ոչ բնակիչները կը պահսին և ոչ ալ աշխատաւորները. մէկ խօսքով ամբողջ հին կեանքն է որ

Հոն կը պատկերուի: Թողովուրդը՝ որ այդ քաղաքին մէջ պիտի շրջի, հագուած պիտի ըլլայ ճիշդ այն տարազներով, զորս Բարիզցիները կը կրէին Միջին դարուն, Վերածնութեան միջոցին, ԺԷ. ու ԺԸ. դարերուն:

Քաղաքին մէջ լուսավառութիւնները պակաս չպիտի ըլլան, պիտի ներկայացուին հին ժամանակուան բարբերէն քաղուած թատերգութիւններ, պիտի երգուին ան ատեններու երգերը՝ ան ատենուան ալ կերպով: Վերջապէս, և ոչ մէկ բան պիտի տարբերի հին ատենի սովորութիւնէն ու բարբերէն:

Մարդիկը ան ատեններուն կեանքովը պիտի ապրին, գործարանները ան ատենի աշխատութիւնները պիտի կատարեն, ու խնութեաններն ալ նոյն ատենուան ապրանքները պիտի ծախեն իրենց յաճախորդներուն: Այսպէսով այցելուները պիտի կրնան զիւրա՛ր բաղդատութեան գնել այն տարբերութիւնը որ կը զբանուի նախնի և արդի Բարիզին միջև, և առանց մեծ դժուարութեան զգալ այն ահագին յատազօղիմութիւնը զոր քաղաքակրթութիւնը անկէ ի վեր ըրած է ֆրանսայի մէջ:

**Շուռ մը որ գաւազանակ կը պսցցնէ**

Հին բան մը չէ ապահովաբար այն տարօրինակ եղանակը՝ զոր Լոնտոնի մէջ գտած են որբերուն և այրիներուն նպաստ հաւաքելու համար: Երեւակայեցէք անգամ մը, շուն մըն է որ այդ գործը կը տեսնէ և շատ յաջող կերպով: Անգլիական երկաթուղիներու ընկերութիւն մը, իր գործաւորներուն, այրիներուն ու որբերուն օգնելու նպատակաւ յղացած է այդ մտածումը ու շունը՝ Թիմ, եօթը տարուան մէջ կրցած է հաւաքել 10 հազար ֆրանքի գումար մը: Ընկերութիւնը անոր վիզէն կախած է կլոր գեղեցիկ գանձանակ մը, «Մի՛ մոռնաք այրիներն ու որբերը» վերտառութեամբ, զոր Թիմ կայարան մտնող և կամ վազոնէն իջնող ճամբորդներուն կը ներկայացնէ կատարեալ քաղաքավարութեամբ, զարմանալի բնագոյով մը զիրքի տէր մարդիկը հասարակ մահալաւացուններէն գանազանեցով: Անգամ մը նոյն իսկ արժանացած է Վիքթորիա թագուհին գնա-

հատութեան, որ իր մէկ ճամբորդութեան միջոցին ուզած էր գայն տեսնել եւ անոր յարգական կեցուածքը շատ սիրուն գտնելով, սակի մըն էր ձգած գանձանակին մէջ ու ըսած:

— Դուն շատ բարի շուն մըն ես:

Սակայն Թիմ՝ հակառակ այդ բարի գործը կատարելուն, ներքնապէս շատ չար է միւս շուներուն հետ, զորս միշտ բռնուել կը ջանայ. գէշ ունակութիւն մը՝ զոր երկաթուղիի ընկերութիւնը չէ կրած խեղճել, ու պարտաւորուած է ցոկակապ մը դնել անոր բերնին:

**ՉԻ ՎԱՅԼԵՐ**

Ա. Տիկն Է...

Տանը մէջ մաքուր չի հագուելով, տեղոյն և կեղտոտ զգեստներ կրելը, որ անհագութիւն կը նշանակէ, չի վայլեր:

Իր զաւկներուն ուշիմութիւնը բերնէ չի ձգելով անոնց մասին ուրիշներու պարծենալը չի վայլեր:

Ինչպէս անխնամ հագուելը, նոյնպէս ալ արդուպարզին չափազանց հոգ տանիլը չի վայլեր:

Միայն մէկ շնորհքով մատնի կրելու տեղ բանի մը մատնի մէկէն մատերն անցնելը բարեձևութեան հակառակ ըլլալով, չի վայլեր:

Ասոր պէս, ականջը տարապայման չափով երկար օղեր կրելը չի վայլեր: Փոքրիկ ականջը զարդ է մարմնոյն, իսկ երկայն օղին բեռնովը ձգուած ականջին աղւոր չըսուիր և երեսի չի վայլեր:

Անյարգար կերպարանքով եղած ատեն ազամանդեայ շողշողուն օղեր կրելը չի վայլեր:

Վերջապէս, այս պատշաճից օրէնքները գիտնալով հանգերձ, անոր համեմատ վարուելու հոգ չի տանելը ամենեւին չի վայլեր:

Տիկ. Յամինէ

Մեր արտասահմանի բաժանորդներէն ալ կը խնդրուի իրենց բաժնեգինը վճարել:

Հետեւեալը զրկուած է մեզ հրատարակելու խնդրանքով .

“Ի Մ Վ Ի Ճ Ա Կ Ս”



Պանք Օթօմանը պօսպա նետեցինք ,  
Միր ձեռքով մենք մեզ ջարդի մատնեցինք .  
Տուն, գործ ու վաստակ մէկ թարաֆ նետած՝  
Զօլուխ չօձուխով վառնա վազեցինք :

Հալարներով հայ լեցուեցանք այս տեղ,  
Չի կար այս ցաւին ոչ բփռչի ոչ գեղ .  
Ախոսները ըրինք պաւկելու տուն—տեղ,  
Շատեր չունեցանք վառելու կանգեղ :

Ամիսներով մենք կեցանք պօշ պարապ ,  
Ճամբանիս բաց էր գէպի խոր վիրապ .  
“Քար կրէ՛, ըսին, շուտ վազէ՛ քարափ” ,  
Ան ալ չի կրցայ, վուճուտս էր խարապ :

Արհեստաւորներ ամենն իր կարգին  
Հոս հոն իյնալով գործ բնորոշցին .  
Ուսումնականներ՝ հաւկիթ ծախեցին,  
Հէգարիֆէնտներ՝ “պօյա” պոռացին :

Առնողէն շատ էր ապրանք ծախողը,  
Որ կը վետային բաղբին չորս կողմը .  
Մարդ կը շուարեր ուզածը առնել,  
Տեսնողը՝ “աղբար, ինձմէ ա՛ռ” կըսէր :

Օրիորդ Ֆրայզըր *saw us saw* հասաւ,  
Գալթականաց մէջ շատ աղբատ գտաւ .  
“Եկէ՛ք, ամեն օր ձեզ հաց տամ” ըսաւ,  
Բոլորիս սիրտը յուսով լեցուեցաւ :

Այս բանը տեւեց մէկ բանի ամիս,  
Բէք շատեր առին փայտ, դրամ ու միս .  
Հիւանդանոցը գացող պառկողը՝  
Տան վարձք չէր իտար մէկ բանի ամիս :

Հանգանակութեան վերջը շուտ եկաւ,  
Ղըրկուած փարան ա՛լ *saw us* ըսաւ .  
Եղած օգնութիւնը կէս առ կէս իջաւ,  
Երեք հոգիին մէկ հաց տրրուեցաւ :

Օրիորդ Ֆրայզըր *ահաօզը* զբրաւ,  
Մեզ թուեցաւ թէ խուշ մըն էր թուաւ .  
Ա՛լ ունեցածնիս դրինք մենք գըրաւ,  
Սրտերնուս մէջը յոյսերնիս մե՛տաւ :

Աս վիճակիս մէջ մընացի ապշած,  
Բալթօս բանթալոնս բոլորն ալ մաշած,  
Գլուխըս ուռեցուց Մատաղեան խաշած,  
Թամ չորս տարի է, վերջը չեկաւ գնաց :

Ճիշերս փառատէ յուշկա պիպէրին,  
Երազըս տեսնեմ՝ եազը սիպիրին .  
Հէլվա, ուսմանի ու ձուածեղին  
Կարօտը բաշեմ՝ մէյմէկ բըտորին :

Աղգական, ընկեր, մէկ մասը Պոլիս,  
Ես վառնայի մէջ բըռեցի խալիս .  
Կակափուզներով լեցուն է չորս գիս,  
Վերջը չեկաւ, աղբար, աստար բաշածիս :

Խազան, թէնձիրէն ծախեցի կերայ,  
Աս խեղճութեանըս օգնող չի գտայ .  
Մութ ու խոնաւ է նստած սենեակըս,  
Երկինքի լոյսէն ալ զրկուեցայ :

Բնութիւնս ալ փոխած, եղեր եմ նազըս,  
Շուտ մը ճերմկցաւ մազըս ձորուբըս .  
Անցեալն յիշելով կը կըլլեմ թուբըս,  
Խաւսպար կը տեսնեմ առջեւս շուբըս :

Ալ ճարըս հատած, ձամբորդեմ ըսի,  
Ելայ շիփ շիտակ գօնախոյն գացի .  
Ան ալ “եսաւագ ջր” կը պոճայ ինծի,  
Նորէն յուսահատ այստեղ մընացի :

Աստուած ողորմի ինծիպէսներուն,  
Ականջնին խօսի զօմ իթէներուն .  
Ճիշդ տասնըվեց տուն իրայս խեղճութիւն՝  
Ճարահատ գըրեց Գանթար Յարութիւն :



Հայկական սրճարան և ճաշարան,  
ընթերցարան, պիլարատ, կիլլակ եւ  
ընտիր սիկարներ : Հաստատութիւնս  
բաց է ամեն օր առաւօտեան ժամը  
5էն մինչև 2: Երրորդ Ափիւթիւ 388:

28րդ փողոցին մօտիկ Ի Նիւ—Եօրք:

ՊՈԼՍՈՒԿԱՆ ՏԻՊԱՐՆԵՐ



ՎԱՐԺՈՒՀԻՆ

Ընդհանրապէս եւագմաձիւ աղջիկ կըլլայ ան :

Իր արդուզարդն է գլխուն վրայի պաղա Քոռոխեթները և ոտքին ալա պութօնիէր պօթը :

Գալուածքի մէջ շիֆես, խօսուածքին մէջ Քիւնես եւ բնութեան մէջ նօպչես կուզէ ունենալ :

Փողոցին մատմազէն է, դպրոցին օրիորդը և իր տան սպասուհին :

Վչէն առկախ շին քը յենը՝ որուն ծայրը կը ճոճի թիթեղապարզ մատիտ մը ու օրը 68 վայրկեան առաջ գացող . . . ժամացոյց մը՝ որ իր անունը չարգարացներ բնա :

Կիրակի առաւօտուն եկեղեցի, ցերեկին ճաշի, իսկ երեկոյին պածիկի կերթայ :

Պզտիկներուն՝ նոնո՛չս, չափահասին հոգիս, իսկ տնօրէնին ԷֆէնՏԻՍ . . . կըսէ, մանաւանդ ամոռոյն ՅԻ թարեպատեհ օրերուն :

Կերածը ԱՊՈՒՐ, խմելիքը՝ ՋՈՒՐ, ականջը ՍՈՒՐ, սիրտը . . . ԹԱՓՈՒՐ . . . կըլլայ միշտ :

Սրահին մէջ լուրջ է, իսկ երբ տընօրէնը կանչէ . . . կարծես թէ ան չէ :

Բոռուէն տաքնալու համար կը զործածէ . մարմինը ելեւէջներ չունի . . .

Ամսական առած օրը կանուխ տուն կը դառնայ պարսֆ վճարելու համար :

Հօրը հետ կը գտտի, մօրը հետ կը ժպտի :

Տարին չորս անգամ Բերայ կըլլայ՝ Գարնան՝ գլխարկի համար, ամառը՝ պառնա ֆիսթանի համար, աշնան՝ զոյգ մը պօթի, իսկ ձմրան . . . (ականջդ բեր . . .

Քաղոնապէս) պարահանդէսի համար :

Մայրապետի մը կոյս սիրտը ունի,

ուր տիսակն իսկ չի թառիր բացի ՎԱՐԺԱՊԵՏԻ անունէն :

Ընդհանրապէս ամուսինը վարժապետ, հայրը շուկացի, իսկ մայրը խըլավուզ կըլլայ :

Իրեն սիրական ժամանցը իր մէկ պաշտօնակցին հետ անցուցած թէք-աթէթն է :

Գոյներու մէջ ՍԵԻՐ իսկ սրտի մէջ ճԵՐՄԵԿԸ կը փնտռէ :

Իր լուռանկարը, Միջակ, նիհար ու բարեձև հասակ մը : Թաղեայ գլխարկ մը վրան սեթաւիչով, սե կամ մութ գոյն քօտիւմ մը

Տիֆ պօշին, մասկառէթի սե պօթեր աշա յաթի ֆեկզ : Տունէն կարուած քօթք ֆոօշէ մը, համեստ հովանոցով սե բուրդէ կանթերով . . . Երբ հանդպիս հարցուր իրեն.

— Արմենակս յառաջ կերթայ՝ կոր ՕՐԻՈՐԴ . . . :

Կ. Պոլիս Վ. Փ.  
1900 Յունուար

Ծ Ի Ծ Ա Ղ



Գործաւորուհի մը գեղարանին ցուցափեղկին մէջ գտնուած զարդարուն օճառները տեսնելով, ներս կը մտնէ .— Պարոն՝ դեղագործ, չորս գահեկանի օճառ կ'ուղեմ . . .

Գեղագործը բաղաբաժարական կոտրատուքներով .— Ո՞ր տեսակէն, տիկին . . . Վիեննա շինողածը թէ Բարիզեան անուշահաս օճառը . . .

Գործաւորուհին կոչտօրէն .— Ո՞ր տեսակն ըլլայ թո՞ղ ըլլայ . . . կը բաւէ որ՝ երկանս շապիկին աղտերը հանէ :

Երիտասարդը .— Ֆլօրի՛, եթէ բեզ հետ ամուսնանամ, կը կարծես թէ՛ հայրդ մեկի պիտի ներէ :

Օրիորդը սիրուն շարժուածքով մը .— Այո՛, սիրելիս, վստահ եմ ատոր համար :

— Ու նաև իր տուններէն մէկը մեզի կը նուիրէ՞:

— Անշուշտ կը նուիրէ:

— Կը կարծես թէ աղւոր կեանք մը վարելու չափ գրամ կուտայ մեզի:

— Այդ մասին վստահ եմ:

— Արգօք զիս իր վաճառատան մէջ կառնէ՞:

— Ինչո՞ւ չէ:

— Կը թողո՞ւ որ իր առևտրական գործերը ուզածիս պէս կառավարեմ:

— Այո՛, այո՛, ատոր համար բոլորովին վստահ եմ:

Երիտասարդը մասձելէ ետքը — Օ՛. . . այդպէ՛ս է. ինձ կը թուի թէ հայրդ մեծ փափագ ունի բեզ իր գլխէն հեռացնելու, հետևաբար, օրիորդ, զղջացի. ալ չեմ փափագիր բեզի հետ ամուսնանալ:

Արքունիքի մը տիկիններ երեսնին շատ ներկած, անգամ մը ներկայ գտնուեցան հացկերոյթի մը գոր իշխանը կուտար ի պատիւ փիլիսոփայի մը . խօսակցութեան միջոցին հարցուեցաւ փիլիսոփային թէ, այդ կանանց գեղեցկութեանը վրայ ինչ կարծիք ունէր .

— Այդ մասին չեմ կրնար բան մը ըսել, պատասխանեց փիլիսոփայն, որովհետև ներկուած պատկերներէն չեմ հասկնար:

Անգամ մը ի Ֆրանսա կանանց ահուժը մը մէջ իգական կաճառ մը հիմնելու գաղափարը յղացան. թէպէտև դժուար չեղաւ այս խորհուրդը իրագործելու համար 40 անդամուհիներ գտնել, բայց աւաղ, ջուրը ինկաւ, վասն զի, երբ առժամայ դիւանը կազմելու կարգը եկաւ, ոչ ոք իրենցմէ յաճձն առաւ երիցագոյնը ըլլալու, մինչդեռ ամենքն ալ ոտքի ելան, երբ ըստ օրինի ատենագրի պաշտօնին կրտսերագոյնը կը հրուիրուէր:

Թարգմ. ԲԻԲՕ

Ն Կ Ա Ր Հ Ա Ն Ո Ւ Կ

Մէկ քանի պարո՛ւներ առաջարկած էին մեզի թէ քիչ մըն ալ Եւրոպական ռեպլիկաներու նման դժուարաւ կարգացուելիք նկարհանուկներ պատրաստենք, որովհետև ցարդ հրատարակուածները աչքերնին դոց կը կարգան եղեր. . . մենք ալ իրենց փափագին գոհացում տալու համար անցեալ շաբթուանին նրկարները տեղափոխած էինք, բայց մինչև այսօր տեսնելով որ այդ մեծախօսիկներէն և ոչ մին չի կրցաւ զայն անուրխալ կարգալ, ուստի պարտաւորեցանք առաջուան պէս նկարները իրենց կարգաւ զնել:




նով



ԳԳԳԳԳԳԳԳ

գոմ Գ



Առաջին անխալ կարգացողին նուէրն է կատակերգութիւն մը:

Մ Ո Լ Ի Է Ռ

ԲՈՒՆԻ ԱՍՈՒՍՆՈՒԹԻՒՆ



(Շարունակութիւն)

Փառ. — Աւելի կ'ախորժիմ անբան անասուն մը ըլլալ քան թէ այդ խօսքին հաւանիլ :

Ծեր. — (Մեկ) կրողը տանի քեզ մարդ (բարձր) է՞յ Պ. Պատուելի , քիչ մ'ալ մարդ մտիկ կընեն . ժամ մ'է կը խօսիմ , պատասխան չես տար :

Փառ. — Թողութիւն ըրէք , իրաւացի սրտմտութիւն մը ջիղերս ու միտքս իրար անցուց :

Ծեր. — Իս մտիկ ըրէ մարդ , պիտի խօսիմ քեզի հետ :

Փառ. — Ի՞նչ լեզուով պիտի խօսիս հետս .

Ծեր. — Ի՞նչ լեզուով մը , բերնիս մէջ եղած լեզուովս , դրայիներս լեզուն փոխ չպիտի առնեմ ա' :

Փառ. — Բայց ո՞ր ազգին լեզուովը : Իտալերէ՞ն :

Ծեր. — Չէ' :

Փառ. — Հելլեններէ՞ն թէ եփրայեցիներէն .

Ծեր. — Չէ' ըսինք եղբայր . չէ' :

Փառ. — Գրաբա՞ն թէ . . .

Ծեր. — Չէ' , չէ' , չէ' , աշխարհաբառ :

Փառ. — Ուրեմն աջ կողմս անցիր , վասն զի ձախ ականջս գիանական լեզուներու համար պահուած է , իսկ աջը ռամկական ու մայրենի լեզուին համար :

Ծեր. — Խորհուրդ պիտի հարցնեմ քեզի :

Փառ. — Արդեօք փիլիսոփայական գրքուարութիւն մ'է հարցնելիքդ . թերեւ կուզես իմանալ թէ գոյութիւն ու պատահումք էակին նայելով համանշանակ են թէ երկբայական :

Ծեր. — Ամենեկին ասանկ բան չէ :

Փառ. — Թէ արամարանութիւնը արհեստ է թէ գիտութիւն :

Ծեր. — Չէ' , չէ' ապալ չէ' :

Փառ. — Թէ միտքն երեք գործողութիւններուն վրայ կը ճառէ թէ երկրորդին միայն :

Ծեր. — Չէ' , չէ' , չէ' :  
Փառ. — Ուրեմն միտքդ բացատրէ :

Ծեր. — Գեղի ըսելիքս սա է որ առողջ եւ գեղեցիկ աշխկան մը հետ կարգուելու միտք ունիմ , բայց կը վախնամ կոր :

Փառ. — Խօսքը մարդուս տրուած է որ իր մտածութիւններն յայտնէ . եւ ինչպէս մտածութիւնք նկարագիրք են իրաց' նոյնպէս եւ խօսք նկարագիրք են մտածութեանց . լաւ կը հասկնա՞ք պարոն . (Ծերունին համբերութիւնը հասնելով բանի մը անգամ ձեռքովը Փառնակին բերանը կը գոցէ , որ վերցուցածին պէս նորէն կը շարունակէ) Այլ այս նկարագիրները անով կը տարբերին միւս նկարագիրներէ որ իրենց նախագիծերէն որոշված են ամեն տեղ . իսկ խօսքը իր մէջը կը պարունակէ իր նախագիծը , որովհետեւ ուրիշ բան չէ բայց եթէ նոյն իսկ մըտածութիւնն է արտաքին նշանով մը յայտնուած . ուրեմն խօսքով զրուցէ քու մտածութիւնդ . որովհետեւ խօսքը նշաններուն մէջ էն հասկնալի նշանն է .

(Ծերուն զայն ներս կը հրէ և դուռը կը գոցէ որ դուրս չելլէ . Փառնակ տանը մէջէն) Այո' , խօսքը հսկուոյն պատկերն է . (Պատուհանէն կը շարունակէ) Խօսքը հայելի մ'է որ մարդոց գաղտնիքները պարզ կերպով կը ներկայացնէ , և որովհետեւ դու մըտածելու եւ խօսելու կարողութիւնը երկուքը մէկանց ունիս , ինչո՞ւ համար քու մտածութիւնդ ինծի հասկցնելու համար խօսք չեն գործածեր :

Ծեր. — Ես ալ անանկ պիտի ընեմ , բայց մտիկ չես ըներ կոր :

Փառ. — Ահա կընեմ , խօսէ' :

Ծեր. — Ուստի Պ. Պատուելի , կըսեմ որ . . .

Փառ. — Սակայն կարճ ըրէ . լակոնական ոճով խօսէ քնձի հետ :

Ծեր. — Շատ աղէկ , ես ձեզի . . .

Փառ. — Մէջէ մէջ խօսքեր պէտք չեն : (Ծերուն կը բարկանայ գետնէն բար կ'առնէ) :

Փառ. — Այդ ի՞նչ է , միտքդ բացատրելու տեղ սիրտդ կը նեղանայ , սասանզգամը նայեցէք , գիտնականութիւնը սող մարգէն ալ աներես է եղեր ա' . եւ ես ամենուրեք պիտի հաստատեմ քեզի

ցուցիչ և համոզիչ փաստիւք, գերագրական ապացուցութեամբք. թէ դու անբան մը ես եւ անբան պիտի մնաս, իսկ ես եմ եւ պիտի ըլլամ միշտ եւ հանապազ պերճիմաստ Փառնակ Արիստոտելեան:

Մեր. — Այս ինչ շատախօս մարդ է եղեր:

Փառ. — (Տեսարան գալով) Այր գրագէտ:

Մեր. — Նորէն եկար...

(Շար.)



ՆՈՐ

Ա Ձ Մ Ս Տ Ո Ւ Ն

Կ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆԻ

Սագալը չէճէ, աղջկանց կիմնաղիէի դէմը:

Լաթակազմ, կաշեկազմ և ոսկեզօծ ճաշակաւոր կազմեր, գիւրամատչելի գիներով, կը պատրաստէ Նաև վաճառականական տոմարներ եւ գպրոցական տետրակներ:

ՊԱՏՈՒՀԱՆԻՆ ՄՈՒՐՀԱԿԸ

Թատրերգութիւն 7 արարուած

ՏԻԳՐԱՆ ՄԱՆԱՎԵԱՆ

«Գայլ Վահան» ողբերգութեան հանգուցեալ հեղինակին սոյն Բ. երկն ալ կը յանձնարարուի բանասիրաց ուշադրութեանը: Գինն է 1 ֆրանք: Կեդրոնատեղին Վառնա Արևելեան տպարան: Օննիկ Բարսեղեան:

ԱԶԴ

Ներկայ 1900ի մէջ հրատարակուելիք «Վարդանանց պատերազմը կամ Վասակ Սիւնի և Վարդան Մամիկոնեան» բնական դործին տպագրութեանը շիւրութիւն մը տուած ըլլալու համար այժմէն բաժանորդագրութիւն մը բացուած է. փափաքողները թող աածին իրենց հասցէները ու բաժնեգինը (2 ֆր.) զրկել հեղինակին հասցէին.

ըտաշէս Կարապետեան (բօսթ ուէսութեանգ) Շումլա:

Հրատարակութենէ վերջը սոյն զիրքը պիտի ծախուի 2, 70 սանդիմի:

4—10



ՆԵՐՍԷՍ ԽԱԶԻԿԵԱՆ

և

ԼԵՒՈՆ ԱՃԷՄԵՍՆ

ՈՍԿԵՐԻՉ

Հայոց Եկեղեցիին դիմացը, Վառնա:

Ոսկերչութեան վերաբերեալ ամեն տեսակ յանձնարարութիւններ կը կատարուին գոհացուցիչ պայմաններով. արծաթի և ոսկիի վրայ ծաղկազիր փորագրութիւններ, ինչպէս նաև շատ ձեւով մատանիներ, օղեր և ապարանջաններ կը պատրաստուին: Ամէն յաճախորդներ արդէն գոհ մնացած են այս երկու վարպետներէն:

Отговорничя М. Сконовъ  
Печальница „Взаимность“ — Варна.